ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով համացանցի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿ-ԷԱՃԾՁԲ-ԻԿ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 18.02.2019թ. ժամը 10-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Ազարյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Գ.Սեփոյանը, Լ.Հովհաննիսյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Գնման գործընթացը կասեցնելու վերաբերյալ

Հանձնաժողովը տեղեկանալով, որ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 11.02.2019թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք «ՀՀՔԿ-ԷԱՃԾՁԲ-ԻԿ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի 1, 2, 5-10 չափաբաժինները չկայացած հայտարարելու համար/Բողոքը կցվում է/, որոշեց.

''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կասեցնել գնման գործընթացը մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Ա.Ազարյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Գ.Սեփոյան

_____ Լ.Հովհաննիսյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան